
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ • ՈՐՈՆ • ՀԵՌԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2021 [1]
ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի ասպիրանտ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԵՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ XIV-XV ԴԱՐԵՐՈՒՄ

Հոդվածում փորձ է արվել պատմական սկզբնաղբյուրների և հրապարակում եղած գիտական հետազոտությունների հիման վրա ուսումնասիրել Հայ առաքելական եկեղեցու իրանահայ թեմերի կամ եպիսկոպոսական վիճակների հոգևոր իշխանության տակ գտնվող վանքերի, մենաստանների և եկեղեցիների դպրատների ու գրչության օջախների գործունեությունը XIV-XV դդ.: Այս ժամանակահատվածը հայոց պատմության ամենաժնդակ հարյուրամյակներից էր, երբ քոչվորական ցեղերը՝ մոնղոլներ, ուզբեկներ, կարակոյունլուներ ու ակկոյունլուներ, մեկը մյուսին հաջորդելով, թալանում, ավերում էին Հայաստանը և հայահոծ գաղթօջախները: Վերջինների շարքում ամենամեծ կորուստները կրեցին իրանահայ գաղթավայրերը և դրանցում հաստատված հոգևոր թեմերը: Չնայած ծանր տնտեսական և իրավաքաղաքական վիճակին՝ իրանահայ թեմերում չդադարեց հոգևոր-մշակութային կյանքը, շարունակեցին գործել գրչության հին և նոր կենտրոնները, որոնց ուսումնասիրության փորձ է սույն հոդվածը: Գրչության կենտրոններում ստեղծված մատյանների թեմատիկան բավական ընդգրկուն է, և զուտ հոգևոր գրականությունից զատ (Աստվածաշունչ, Ավետարան, Առաքյալների թղթեր, Ճառընտիր, Մեկնություններ, Դավանաբանական թղթեր, Ժողովածուներ, Տոնապատճառ, Յաստաւուրք, Սուրբ Գրոց Լուծումք) առկա են նաև գրական ստեղծագործություններ, օրինակ՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» և այլն:

Հիմնաբառեր. *իրանահայ թեմեր, գրչության կենտրոններ, Սբ Թադեոսի վանք, Թավրիզ, Սուլթանիե*

DOI: 10.52174/1829-0280_2021_1_162
JEL: Z00, Z12

Ներածություն: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններն անգնահատելի պատմական սկզբնաղբյուր են միջնադարյան Հայաստանի և հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրության համար: Ի տարբերություն պատմողական կամ տարեգրային բնույթի սկզբնաղբյուրների՝ հիշատակարանների հեղինակները դեպքերին ականատես և ականջալուր հոգևոր ու աշխարհիկ անձինք են, և «նրանց հաղորդած տեղեկությունները վստահելի են. ժամանակագրական ու պատմական անճշտություններ ու սխալներ գրեթե իսպառ բացակայում են հիշատակարաններից»[1]: Գրիչները, կազմողները կամ էլ պատվիրատուները, դեպքերի թարմ հետքերով, արժեքավոր բազմաթիվ վկայություններ են թողել սերունդների համար, որոնք կամ անտեսվել, կամ էլ վրիպել են մեր պատմիչների ու ժամանակագիրների աչքից: Հայոց եկեղեցու եպիսկոպոսական վիճակների կամ թեմերի մասին պատմողական բնույթի սկզբնաղբյուրների ընդհանրական ու հատվածային տեղեկությունները հաջողությամբ լրացվում են ձեռագրերի հիշատակարանների վկայություններով, որոնք առավել հասցեական են և արժանահավատ:

Գրականության ակնարկ: Իրանահայ գաղթօջախի տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային կյանքի ուսումնասիրությունը մեկ հարյուրամյակից ավելի հայագիտության ուշադրության կենտրոնում է, և հրապարակի վրա կան բազմաթիվ արժեքավոր մենագրություններ ու հոդվածներ: Դեռևս XIX դ. վերջերին բուն իրանահայ գաղթօջախներում՝ Թավրիզում և Նոր Ջուղայում, հետաքրքրությունը մեծացավ իրենց «փոքր հայրենիքի» պատմության հանդեպ: Հարություն Տեր-Հովհաննիսյանցը հրապարակեց «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան» երկհատոր աշխատությունը, որին հետևեցին Նազարեթ Գորոյանցի «Պարսկաստանի հայերը»[2] և Հ. Առաքելյանի «Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան և ապագան»[3] արժեքավոր ուսումնասիրությունները: Խորհրդային տարիներին ևս Իրանի հայկական գաղթօջախների տնտեսական, սոցիալական և քաղաքական պատմությունը ուսումնասիրվել է մի քանի հեղինակների կողմից, որոնցից կարևոր ենք համարում առանձնացնել Ա. Աբրահամյանին, Վ. Բայբուրդյանին, Հ. Մարտիրոսյանին, Հ. Փահլևանյանին: XX դարավերջին և XXI դարասկզբին լույս տեսան իրանահայերի մի շարք արժեքավոր գրքեր, որոնցում փորձ էր արվել պատմական սկզբնաղբյուրների և առկա գիտական գրականության համադրմամբ ներկայացնելու Իրանի հայկական գաղթօջախների պատմությունը: Սրանց շարքում կարելի է առանձնացնել Բաբկեն և Սեդա Տեր-Հակոբյանների հեղինակած «Պատմություն իրանահայերի» գիրքը, որն առավելապես հայրենագիտական բնույթ ունի: Մինչ այժմ հրապարակի վրա եղած գրականությունից, որը իրանահայության ամբողջական պատմության շարադրման փորձ է, հաջողված կարելի է համարել Էդ. Բաղդասարյանի «Իրանահայ համայնքների ամբողջական պատմություն» 10 հատորյա արժեքավոր մենագրությունը, որը լույս է տեսել 2012 թ.:

---

[1] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1301-1400 թթ.), կազմեց՝ **Լ.Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1950, էջ VII:

[2] **Գորոյեանց Ն. Յ.**, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:

[3] **Առաքելյան Հ.**, Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան և ապագան, մասն Ա, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1911:

Հարկ է նշել, որ իրանահայ հոգևոր թեմերին կամ եպիսկոպոսական վիճակներին նվիրված հատուկ հետազոտություններ չեն կատարվել: «Հայոց եկեղեցու թեմերը» իր արժեքավոր աշխատության մեջ Պ. Հակոբյանը ի տեղին հիշատակում է իրանահայ հոգևոր թեմերը կամ եպիսկոպոսական վիճակները՝ սկսած IV դարից մինչև XX դարասկիզբ: Սակայն դրանք հիշատակվում են որպես Հայոց եկեղեցու հոգևոր-վարչական կառույցներ՝ բնականաբար չմանրամասնելով նրանց պատմությունը: Իրանահայ գաղութի պատմությունն ուսումնասիրողներն այս թեման հպանցիկ շոշափել են միայն իրենց հետաքրքրող հիմնախնդրի համատեքստում՝ որպես օժանդակ նյութ կամ լրացում: Հայոց գրի և գրչության կենտրոնների ուսումնասիրողները ևս հիշատակել են իրանահայ գաղթօջախներում գործող գրչության կենտրոնները, սակայն, իրենց թեմատիկայից ելնելով, չեն մանրամասնել որոշակի հանգամանքներ: Ուսումնասիրողներից շատերը, բացառությամբ Ա.Գ. Աբրահամյանի, հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որպես իրանահայերի հոգևոր-կրոնական պատմության կարևոր սկզբնաղբյուր, ընդհանրապես շրջանցել կամ չեն օգտագործել՝ ապավինելով հիմնականում պատմողական բնույթի աղբյուրների տեղեկություններին: Սույն հետազոտության հիմքում դնելով XIV-XV դդ. իրանահայ գաղթօջախներում ընդօրինակված մատյաններիի, հիշատակարանների հաղորդած տեղեկությունները և համեմատելով դրանք հարակից գրականության հետ՝ փորձել ենք լրացնել Հայ առաքելական եկեղեցու իրանահայ թեմերի հոգևոր-մշակութային կյանքին վերաբերող տեղեկությունների բացը:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացվել է՝ օգտագործելով լայն համեմատության և պատմահամեմատական մեթոդների համադրությունը: Պատմական ժամանակաշրջանը, տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, հոգևոր-կրոնական եղելությունները, իրադարձությունների վայրը, գործող պատմական դեմքերը ուսումնասիրվել են համաժամանակյա դիտանկյունից՝ հիմնականում պահպանելով դրանց ժամանակագրական ատաղձը, չխախտելով պատմականության սկզբունքը: Օգտագործվել են աղբյուրագիտական հետազոտություններին բնորոշ մի շարք մեթոդաբանական դրույթներ, որոնք հնարավորություն են ընձեռել իրանահայ գաղթօջախներին առնչվող շուրջ 120 հիշատակարաններից դուրս բերել հոդվածի թեմային առնչվողները: Այս տեսանկյունից առաջնային է աղբյուրի հայտնաբերումը (մեր դեպքում՝ XIV-XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններում իրանահայ հոգևոր թեմերին առնչվող նյութերի դուրսբերումը), տեքստի հստակեցումը, սկզբնաղբյուրի ծագման վայրը, հեղինակը, ժամանակը, տեքստի կազմման հանգամանքները, պատվիրատուն և նպատակը: Հոդվածի մյուս մեթոդաբանական հիմքը հերմենևտիկական վերլուծությունն է՝ տեքստի մեկնաբանությունը, որը հնարավորություն է տալիս ճշտելու աղբյուրում հաղորդվող իրողությունների հավաստիությունը, տեքստի հեղինակի դավանաբանական պատկանելությունը և վերաբերմունքն իր շարադրած դեպքերի նկատմամբ: Տեքստերի հերմենևտիկական վերլուծությունը լայնորեն տարածված է հատկապես աստվածաբանական բնույթի հետազոտություններում և, բնականաբար, ելնելով ներկայացվող թեմայի կրոնագիտական ուղղվածությունից, օգտագործվել է որպես ուսումնասիրության մեթոդաբանական կարևոր հիմքերից մեկը: Կիրառվել են նաև սկզբնաղ-

բյուրների վերլուծության և համադրության մեթոդները, երբ համեմատվել են միևնույն բնույթի և բովանդակային առումով միմյանց նման կամ լրացնող տեղեկությունները՝ աղբյուրների ժանրային տարբերություններով հանդերձ: Մեր պարագայում համեմատական նյութի սկզբնաղբյուր են հանդիսացել պատմողական բնույթի երկերը, օտարերկրացի ճանապարհորդների ուղեգրական նոթերը և հայերեն ձեռագրերի հիշատակարանների տեղեկությունները միևնույն իրադարձության, տեղի, ժամանակի և անձերի վերաբերյալ: Աղբյուրագիտական համադրության օգնությամբ ճշգրտվել են իրանահայ գրչության նշանավոր կենտրոնների գոյատևման ժամանակը, դրանց վայրերի մասին ժողովրդագրական տվյալները (օրինակ՝ Թավրիզի ընդհանուր բնակչության և դրանում հայկական տարրի քանակի հարցը և այլն):

Վերլուծություն: Մեր ուսումնասիրած՝ XIV-XV դարերով թվագրվող շուրջ 120 հայերեն ձեռագրերի հիշատակարաններում[4] ականատես հեղինակների արժանահավատ տեղեկություններ են պահպանված պարսկահայ թեմերը կամ եպիսկոպոսական վիճակներն ընդգրկող նահանգների, գավառների, հայաշատ քաղաքների, վանքերի, եկեղեցիների և գրչության կենտրոնների մասին: Դրանցում հիշատակվում են նաև հիշյալ թեմերի բազմաթիվ առաջնորդներ, հոգևոր տարբեր աստիճան ունեցող գործիչներ, գրիչներ, ծաղկողներ, ինչպես նաև ժամանակի նշանավոր աշխարհականներ, որոնց «հալալ արդեամբ» ընդօրինակվել են այդ անգին ձեռագիր հուշարձանները: Հիշատակարաններից երևում է, որ բավականին լայն է ընդօրինակած կամ հեղինակած մատյանների թեմատիկան՝ Աստվածաշունչ, Ավետարան, Առաքյալների թղթեր, Ճառընտիր, Մեկնություններ, Դավանաբանական թղթեր, Ժողովածուներ, Տոնապատճառ, Յասմաւուրք, Սուրբ Գրոց Լուծումք, գրական ստեղծագործություններ, օրինակ՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը» և այլն:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածը հայոց պատմության ամենադժնդակ հարյուրամյակներից է, երբ քոչվորական ցեղերը՝ մոնղոլներ, ուզբեկներ, կարակոյունլուներ ու ակկոյունլուներ, մեկը մյուսին հաջորդելով, թալանում, ավերում էին Հայաստանը: Մոնղոլական էլղանության հարկային քաղաքականության անմարդկային բեռը և մոնղոլ-թաթարական խաշնարած տարազան ցեղերի կողմից Հայաստանը համատարած արոտավայրի վերածելը քայքայեցին երկրի տնտեսությունը, խաթարեցին առևտրատնտեսական կապերը արտաքին աշխարհի հետ: Երբեմնի ծաղկուն և առևտրաշատ բազմաթիվ քաղաքների բնակիչներ կամովին կամ հարկադրաբար բռնեցին գաղթի ճանապարհը, և արդեն գոյություն ունեցող հայկական գաղթօջախների շարքը համալրեցին նորերը, որոնց թվում էր նաև մեզ հետաքրքրող Օրդուբազարի կամ Սուլթանիեի գաղութը: Բուն Պարսկաստանի խորքում հիմնված Սուլթանիեի ծաղկուն հայկական գաղթօջախը կարճատև կյանք ունեցավ, բայց հասցրեց նշանակալի հետք թողնել պարսկահայոց տնտեսական և հոգևոր կյանքում: Ինչպես իրավամբ կարծում են որոշ հետազոտողներ, Սուլթանիեում հաստատվել էին նաև Անի մայրաքաղաքից գաղթածնե-

[4] Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ **Լ.Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1950: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I, (1401-1450 թթ.), կազմեց՝ **Լ.Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1955: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, (1451-1480 թթ.), կազմեց՝ **Լ.Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958:

րը, որոնք իրենց հետ բերել էին ոչ միայն հայոց երբեմնի մայրաքաղաքի առևտրական և արհեստավորական հարուստ ավանդույթները, այլև անհական գրչության կենտրոնին հատուկ հմտությունները: Մխիթար Անեցի գրիչը, ով Սուլթանիեում էր հաստատվել մետրոպոլիտ Տեր Սարգսի և թեմակալ առաջնորդ Տեր Գրիգորի[5] հրավերով, իր արտագրած Ավետարանի չափածո հիշատակարանում գովասանքի խոսքեր շռայլելով տեղի հոգևոր և աշխարհիկ երևելիների հասցեին, խոսում է նաև իր ծննդավայրի մասին.

[Յ]իշեմ զգաւառն իմ հայրենին,
Զմայրաքաղաք ամուրն Անին.
Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին՝
Տէր Յակոբա և Սեդային...[6]

Սուլթանիեում և Օրդուի շրջանում հիմնվեցին մի քանի հայկական եկեղեցիներ ու վանքեր, որոնք դարձան նաև գրչության նշանավոր կենտրոններ: Տեղի արհեստավորաառևտրական խավի մի քանի երևելի ներկայացուցիչներ հովանավորում և որպես մեկենասներ էին հանդես գալիս այս կենտրոններում ընդօրինակված մատյանների ստեղծման գործում: Բերենք մեկ օրինակ, որը խոսուն վկայություն է պարունակում վերոհիշյալ իրողության մասին: 1329 թ. Ասլան անունով երևելի մի առևտրական պատվիրում է ընդօրինակել Ավետարան, որը Սուլթանիեի քորեպիսկոպոս Տեր Սարգսի հանձնարարությամբ իրականացնում է գրիչ Գրիգորը: «Արդ, ես՝ ամենամեղ անձն և տկար ոգի Ասլան, ստացող սուրբ Աւետարանիս, ի ձեռն Սարգիս քօրեպիսկօպօսի նըւէրս ընձայեցի զսայ Օրտուբազարի մեծի եկեղեցւոյս սրբոյ Սարգսի զօրաւարին»[7]: Սուլթանիեցի մեկենասները տեղում ընդօրինակված մատյանները նվիրաբերում էին ոչ միայն սեփական վանքերին ու եկեղեցիներին, այլև Պարսկաստանի սահմաններից դուրս գործող հայոց նշանավոր հոգևոր կենտրոններին: Աստվածաշունչ մատյանի ընդօրինակությունը պատվիրած Տեր Գրիգոր քահանայի որդի Տեր Եփրեմ քահանան այն նվիրել էր Վասպուրականի հռչակավոր Վարագա Սբ Նշան վանքին[8]: Մեկ այլ հետաքրքիր վկայություն բերենք մայր հայրենիքի հետ Սուլթանիեի հայ գաղթօջախի հոգևոր-մշակութային կապի մասին. «Արդ, եղև սկիզբն և աւարտ տառապութեան աստուածային մատենիս յաշխարհին Ատրպայական, յարքայանիստ քաղաքն Սուլտանիայ և Թավրէժ, ընդ հովանեաւ սրբոյ Մօրն լուսո և սրբոյն Սարգսի զաւրաւարի, ձեռամբ անիմաստ և անարհեստ փցուն գրչի և ոսկենկար ծաղկի Աւագի՝ յետին կարօտի բանի... և ըստ գրոյս թվո ՉՁՁ (1337) ի բռնակալութեան ազգին նետողաց կարճակեցին Արփայի, և յիշխանութեան... մեծ իշխանաւ իշխանին Բուրթելին, հօր վերասացեալ զարդու զաւակին պարոն Պեշգենին՝ ստացողի աստուածային գանձուս, և ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան տաեռն Սարգսի մետրապօլիտի[9], ի

[5] Տեր Սարգիսը վերը հիշատակած քորեպիսկոպոսն է, իսկ երկրորդը՝ Տեր Գրիգորը, հավանաբար, աթոռակից է: Եթե Տեր Սարգսի պարագայում գործ ունենք, այսպես կոչված, մետրոպոլիտի հետ, ապա, ամենայն հավանականությամբ, Տեր Գրիգոր եպիսկոպոսը թեմակալ առաջնորդ էր Տեր Սարգսի ենթակայությամբ:

[6] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., էջ 312:

[7] Նույն տեղում, էջ 217-218:

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 328:

[9] Գրիչ Գրիգորի հիշատակած Սարգիս քորեպիսկոպոսն է, հմմ. Ա.Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Ա, Եր., 1964, էջ 245:

դպրապետություն մեծ հռետորին Եսաեայ»: Խոսքը, ամենայն հավանականությամբ, Գլաձորի համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցու մասին է, ով 1337 թ. դեռևս ողջ էր (մահացել է 1338 թ.)[10]: Այս տեղեկությունը վկայում է, որ հեռավոր Սուլթանիեում գործող հոգևոր-մշակութային կենտրոնները պահպանել էին կապը հայրենի երկրի հետ, և տեղի օտար տիրակալների ու սեփական հոգևոր առաջնորդների կողքին հիշատակվում են նաև հայ իշխանները (այս դեպքում՝ Սյունիքի Օրբելյան Բուրթել իշխանը), հոգևոր պետերը և ականավոր րաբունապետները:

Սուլթանիեի գրչության կենտրոնի գրիչներից ու ծաղկողներից պահպանվել են լոկ մի քանիսի անունները՝ Գրիգոր, Բարսեղ երեց, Ավագ, Մխիթար Անեցի, Կարապետ: Շատ դեպքերում, եթե մատյանում բացակայում է հիշատակարանը, գրչի կամ ծաղկողի անունը անհայտ է, անհայտ է մնում նաև մեկենասի անձը: Շատ դեպքերում գրիչներն ու մեկենասները միտումնավոր չեն հիշատակել իրենց անունը:

Մինչև մոնղոլական էլղանության անկումը՝ 1385 թ., Սուլթանիեն գերիշխող դիրք էր գրավում միջազգային առևտրում[11], որում մեծ դերակատարություն ունեին հայ խոշոր առևտրականները: Կորցնելով երբեմնի տնտեսական նշանակությունը՝ քաղաքը կամաց-կամաց դատարկվեց և վերածվեց աննշան մի բնակավայրի: Սուլթանիեի հայության հոգևոր-մշակութային կյանքը խաթարվեց քաղաքի տնտեսական դերի անկման պատճառով: Ոչ պակաս հարված հասցրեց նաև, այսպես կոչված, միարարների կամ ունիթորների քայքայիչ գործունեությունը հայության շրջանում. «Լատիններ նախապէս հաստատուած էին Պարսկահայոց սահմանները, իրենց կեդրոն ունենալով Սուլտանիա քաղաքը,- գրում է Մաղաքիա արք. Օրմանյանը,- և անտի հետզհետէ յառաջացած դէպ հիւսիս, և իրենց կեդրոն ըրին Նախիջևանը, Սիւնիքի Ջահուկ գաւառը, ուսկից ծագեցաւ ունիթորական հայերու Ջահկեցի անունը»[12]: Դեռևս 1330 թ. Հռոմի Հովհաննես XXII պապը Սուլթանիեի արքեպիսկոպոս նշանակեց Հովհաննես Կոր անվամբ մի հոգևորականի, ում «ջանքերով» քաղաքի ունիթորական հայ համայնքի մի մասն ընդունեց կաթոլիկություն[13] և ժամանակի ընթացքում ուծացվեց կամ մահմեդականացվեց: XV դ. Սուլթանիեի գրչության կենտրոնը, ինչպես և երբեմնի հարուստ ու մարդաշատ հայկական գաղթօջախը դադարեց գոյություն ունենալուց:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում շարունակում էր գործել նաև հռչակավոր Սբ Թադեոսի վանքի դպրության և գրչության կենտրոնը: Սբ Թադեոսի վանահայրը ավանդաբար նաև Արտազի կամ Ատրպատականի թեմակալ առաջնորդն էր, իսկ վանքի կալվածքները սփռված էին ողջ Ատրպատականում: Այս հռչակավոր գրչության կենտրոնը մոնղոլական էլղանության տարիներին մեծ կորուստներ կրեց, իսկ թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ մի քանի անգամ թալանվեց: XIV դ. սկզբներին

---

[10] Տե՛ս **Խաչերյան Լ.**, Գլաձորի համալսարանը, Եր., 1973, էջ 150:

[11] Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, նշվ. հրատ., էջ 246:

[12] **Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյունակ 2103:

[13] Տե՛ս **Առաքելյան Հ.**, Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան և ապագան, մասն Ա, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1911, էջ 19:

Սբ Թադեոսի վանքի առաջնորդ Տեր Զաքարիայի ջանքերի շնորհիվ ինչ-որ չափով աշխուժացավ Արտազի հոգևոր-մշակութային կյանքը, որի մասին են խոսում վանքում ընդօրինակված մի շարք արժեքավոր մատյաններ: Ռստակես գրիչը, ով ամենայն բարեխղճությամբ և երախտագիտությամբ մեկ առ մեկ հիշատակում է Սբ Թադեոսի վանքի րաբունապետներին, միաբաններին, սպասավորներին, խոսում է հայության գլխին եկած փորձանքների մասին մոնղոլների մահմեդականություն ընդունելուց հետո: Այս ծանր ժամանակներում Վարդան քահանան, թեմակալ առաջնորդ Տեր Զաքարիայի բարի կամոք, հանձնարարում է գրիչ Ռստակեսին արտագրել Ներսես Շնորհալի Հայրապետի «Մեկնութիւն Սաղմոսաց» կամ, գրչի խոսքով ասած՝ «զերգս մարգարէին Դաւթի»[14]: Պետք է արձանագրել, որ Ռստակեսի հիշատակած երկու րաբունապետների կամ ուսուցչապետների՝ Հովհաննեսի և Կիրակոսի մասին տեղեկությունը փաստում է, որ տվյալ ժամանակահատվածում (1315 թ.) Սբ Թադեոսի վանքում, բացի գրչատնից, գործել է նաև հոգևոր դպրանոց: 1330 թ. թվագրվող նույն Ռստակեսի ընդօրինակած Ավետարանից հետո, հաջորդ դարից պահպանվել է միայն երկու մատյան, որտեղ հիշատակվում է Սբ Թադեոսի վանքը՝ որպես գրչության վայր կամ պատվիրատու:

Ի տարբերություն Սբ Թադեոսի գրչության կենտրոնի, Ատրպատականի մեկ այլ հայաշատ կենտրոնում՝ Թավրիզում[15], հոգևոր-մշակութային կյանքն առավել աշխույժ էր, ինչին առաջին հերթին նպաստում էին քաղաքի տնտեսական ներուժը և ժամանակի ընթացքում քաղաքական կենտրոն դառնալու հանգամանքը: Հ. Առաքելյանի պնդմամբ, Թավրիզում 7000 տուն հայ կար[16], և եթե հավատանք ժամանակի եվրոպացի ճանապարհորդ Ռոյ Գոնցալեց դի Կլավիխոյի հաղորդած այն տեղեկությանը, թե քաղաքն ուներ շուրջ 200 000 տուն բնակիչ[17], ապա Առաքելյանի տեղեկությունը մոտ է իրականությանը: Գտնվելով ժամանակի ամենաաշխույժ տարանցիկ առևտրական ճանապարհի վրա, որը Չինաստանից տանում էր դեպի սևծովյան Տրապիզոն և միջերկրածովյան Այաս նավահանգիստներ, Թավրիզը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դարձել էր խոշոր վաճառաշահ քաղաք, որտեղ հաստատվել էին բազմաթիվ հայ մեծահարուստ առևտրականներ: Թավրիզի բոլոր հայկական թաղամասերում գործում էին 12 հայկական եկեղեցիներ[18], իսկ քաղաքի շահաստանում վեր էր խոյանում Սբ Հովհաննես մայր եկեղեցին, որը հետագայում պարսիկները վերածեցին Հազրաթ Սհաբի կոչվող մզկիթի[19]: Ինչպես երևում է ձեռագրերի հիշատակարաններից, Թավրիզում գործող երկու հոչակավոր՝ Սբ Աստվածածին և Սբ Սարգիս վանքերը եղել են գրչության նշանավոր կենտրոններ, որոնք պահելու ծախսերը մեծավ մասամբ հոգացել են

[14] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., էջ 115-116:
[15] Հայկական սկզբնաղբյուրներում հաճախ հանդիպում են նաև քաղաքի Դավրեժ կամ Թավրեժ անվանաձևերը:
[16] Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 27:
[17] **Հակոբյան Հ.**, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. ուղեգրություններ, հ.Ա., ԺԳ-ԺՋ դար (1253-1582 թթ.), Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Եր., 1932, էջ 122:
[18] Տե՛ս **Առաքելյան Հ.**, նշվ. աշխ., էջ 26:
[19] Տե՛ս նույն տեղը:

տեղի հայ վաճառականները[20] և նրանց դուստրերն ու կանայք[21]: Թավրիզի գրչության կենտրոնում ընդօրինակված մատյանների թիվը բավական մեծ է, և բազմաժանր է նաև դրանց բովանդակությունը: Թավրիզի գրիչներն ու կազմողները նաև նորոգում էին հին ու մաշված մատյանները, ինչի մասին վկայում է նորոգող Տիրավագը. «Զի յոյժ հնացեալ էր սուրբ Աւետարանս, և ետ նորոգել զսա ի ժամանակիս, որ Էմատ-խան եկն Թաւրէզ թվ. ՋԽՋ (1497)»[22]:

Մեզ հասած հիշատակարանների շնորհիվ կարող ենք բերել Թավրիզի գրչության կենտրոնների մի շարք գրիչների և ծաղկողների անուններ՝ Հովհաննես, Թումա, Սարգիս, Ներսես երեց, Աբրահամ եպիսկոպոս Մսրի[23], Ստեփաննոս եպիսկոպոս Առնջեցի, Տիրավագ և այլք:

Ինչպես և Սուլթանիեի ու Մակուի պարագայում, Թավրիզում ևս միաբարներն ու կաթոլիկ քարոզիչները քայքայիչ գործունեություն էին ծավալում տեղի հայության շրջանում՝ զբաղվելով բացահայտ հոգեորսությամբ: Հռոմի միսիոներների նպատակը պարզ էր, քանզի Թավրիզի նման վաճառաշահ և հարուստ քաղաքում միակ քրիստոնյա ունևոր հատվածը հայությունն էր, ում զանազան դատարկ ու անհիմն խոստումներով ձգտում էին դավանափոխ անել և մահմեդական Արևելքում, հանձինս կաթոլիկ հայերի, ունենալ հենարան: Հայագիտության մեջ տվյալ հարցին նվիրված բազմաթիվ աշխատություններ կան, և մեր խնդիրը չէ սույն հոդվածի շրջանակներում դրան առավել մանրամասն անդրադառնալը, սակայն թեմայի շրջանակներում կցանկանայինք բերել մի շատ կարևոր փաստարկ-վկայություն: Սբ Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» մատյանի հիշատակարանի[24] բովանդակությունից պարզ է դառնում, որ երկաբնակ - միարար հակամարտությունը Թավրիզում նոր թափ էր առել, և քաղաքի երևելի դեմքերից մեկը՝ խոջա Մասուտշահը դիմել էր Սբ Գրիգոր Տաթևացու օգնությանը և հոգացել «Ոսկեփորիկի» գրության ծախսերը: Խոջա Մասուտշահը «հոռոմ և ֆռանկ» քարոզիչների դեմ Սուրբ երրորդության և Քրիստոսի աստվածեղության հիմնավորման համար որպես լավագույն փաստարկ ու հիմնավորում, անկասկած, օգտագործելու էր ժամանակի ամենալուսավոր իմաստասեր-աստվածաբանի հեղինակած մատյանը: «Ոսկեփորիկը» իր տեսակի մեջ «Վահան հաւատոյ» էր Հայ առաքելական եկեղեցու դավանանքին հավատարիմ հոգևորականների և աշխարհականների համար, որը կարող էր ի տեղին օգտագործվել միարարների և երկաբնակների դեմ պայքարում:

---

[20] Մագաղաթի, ավելի ուշ շրջանում թղթի, մելանի (թանաքի), կազմաստառի պատրաստման ծախսերը ժամանակի համար հսկայական գումար էին կազմում, և պատահական չէ, որ որպես մեկենասներ հանդես էին գալիս հիմնականում հարուստ հայ վաճառականները:

[21] Օրինակ՝ գրիչ Թուման որպես 1336 թ. ընդօրինակված Ավետարանի պատվիրատու է հիշատակում Նազխաթունին. տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., էջ 282-283:

[22] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., մասն երրորդ, էջ 242:

[23] Սույն Աբրահամ եպիսկոպոսը Սբ Էջմիածնում Կիրակոս Ա Վիրապեցի կաթողիկոսի շուրջ ստեղծված դավադրանքի պատճառով, խուսափելով հալածանքներից, գալիս է Թավրիզ և որպես հասարակ գրիչ ու ծաղկող ծառայության է անցնում քաղաքի Բերդաթաղի Սբ Աստվածածին եկեղեցում, որտեղ և ընդօրինակում է Ավետարանը:

[24] Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., մաս I, էջ 9-10, գրության ժամանակը՝ 1401 թ.:

Ունիթորների կամ երկաբնակների դեմ գրված՝ ստորև բերված չափածո ստեղծագործությունը ևս ցույց է տալիս, որ կաթոլիկ միսիոներներն իրենց ցանցն էին գցել շատ թավրիզցիների, և Հովհաննես Տարբերունին իր ոտանավորով սատար է կանգնում Հայ առաքելական եկեղեցու միաբնակ դավանանքին.

…Ես Յովհաննէս Տարբերունի,
Որ զսակաւ բանքս երգեցի,
Ո՛չ զօրաւոր, այլ ըստ կարի,
Դեմ հոռոմոց[25] և ֆռանկի.[26]
Զ֊Քրիստոս աստուած դաւանեցի
Յերկուց բնութեանց լինելով մի,
Որ չհաւատա այսմ տառի
Ընդ Յուդայի դատապարտի[27]:

Պարսկաստանի տարածքում գոյություն ունեցող հայկական հին ու նոր գաղթօջախների բնակիչները բազմաթիվ զրկանքներ կրեցին մոնղոլներին հաջորդած Լենկ Թեմուրի հորդաների արշավանքների տարիներին: Համարյա ողջ XV դ. ընթացքում Պարսկաստանը դարձել էր թուրքմեն կարակոյունլու և ակկոյունլու ցեղերի արյունալի բախումների թատերաբեմ: Քոչվոր նվաճողների բերած զրկանքներին գումարվում էին նաև մերթընդմերթ սաստկացող կրոնական հալածանքները քրիստոնյաների հանդեպ: Հայոց եկեղեցին ստիպված էր իր հոգևոր հոտը պաշտպանել ոչ միայն մահմեդական մոլեռանդների հարձակումներից, այլև այս ժամանակաշրջանում Պարսկաստանում հաստատված կաթոլիկ հոգեորս-միսիոներների քայքայիչ ու պառակտիչ գործունեությունից:

Լենկթեմուրի և նրա հաջորդների ավերիչ արշավանքների ժամանակ պարսկահայ թեմերի կյանքը խաթարվեց, և նորանոր զրկանքներ պատուհասեցին ոչ միայն աշխարհականների, այլև հոգևոր դասին: Փակվեցին կամ քանդվեցին երբեմնի ծաղկուն վանքերն ու եկեղեցիները, հալածյալ և աստանդական դարձան բազմաթիվ հոգևորականներ իրենց հոգևոր հոտի հետ մեկտեղ: Հիշյալ ժամանակաշրջանին վերաբերող ձեռագրերի հիշատակարաններում բազմաթիվ անգամ նվազում են մեզ հետաքրքրող թեմերի հոգևոր-մշակութային կյանքի մասին տեղեկությունները, և եթե նույնիսկ հիշատակվում են նախորդ դարում հայաշատ գաղթօջախները, ապա միայն որպես վաչկատուն ցեղերի ասպատակությունների, միմյանց հետ արյունալի բախումների թատերաբեմ դարձած բնակավայրեր: Խոսքը վերաբերում է հատկապես Թավրիզին և Սուլթանիեհին: Ժամանակի հիշատակարաններից մեկում գրիչ Դավիթը այսպես է ներկայացնում այդ դժնդակ տարիները. «….դառն և պանդուխտ կեանք, ի դառն ժամանակիս, որ եղեւ սով սաստիկ՝ մինչև զպեղծ կենդանիս կերամք բազումք, նաև ի Դաւրէժ քաղաք զմարդիկ կերան և զեւղն մարդոյ որպէս զանասնոյ վաճառէին միմեանց: Եւ եղև այս պատուհաս ի գալ անաւրեն ազգին պարսից, որ կոչի չաղաթայ…»[28]: Ավելի

[25] Նկատի ունի հունադավաններին:
[26] Նկատի ունի կաթոլիկներին:
[27] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., էջ 278-279, գրության ժամանակը՝ 1335 թ.:
[28] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, նշվ. հրատ., մաս 1, էջ 419:

ուշ շրջանում ապրած գրիչ Վարդանը, խոսելով թուրքմեն ցեղապետների ասպատակությունների մասին, ցավով գրում է. «…. որ եկն էառ զԹաւրէզոյ թաղտս և խաւար էած եկեղեցեաց, զի զանկակն ի վեր առին, զոր տէր աստուած ազատեսցէ զմեզ ի սոցանէ, ամէն»[29]:

Եզրակացություններ: Չնայած XIV-XV դդ. Պարսկաստանում ստեղծված դժվարին պայմաններին, պարսկահայ հոգևոր-մշակութային կենտրոնները շարունակում էին գործել և ծառայել սեփական ժողովրդին:

Պարսկաստանում հնուց ի վեր գործող գրչության կենտրոններին՝ Սբ Թադեոսի վանք, Թավրիզ և այլն, XIV դ. ավելացավ Սուլթանիեի կենտրոնը, որը թեև գոյատևեց պատմականորեն ոչ երկար մի ժամանակաշրջան, սակայն նշանակալի հետք թողեց հայոց մատենաստեղծության մեջ: Մոնղոլների էլղանության վերացումից (1385 թ.) հետո երբեմնի առևտրաշատ Օրդուբազար-Սուլթանիեն ավերվեց, տեղի քրիստոնյա բնակչությունը բռնագաղթեց Խորասան, և քաղաքը վերածվեց խղճուկ գյուղակի: Հայ առևտրաարհեստավորական խավի հետ քաղաքից հեռացավ նաև հոգևոր դասը, այսինքն՝ գրչագիր մատյանների պատվիրատուներն ու կատարողները:

Իրանահայ հոգևոր թեմերի գրչության կենտրոնների հիմնական մեկենասները հայ վաճառականներն էին, որոնց «հալալ արդեամբ» ընդօրինակվում էին կրոնական, դավանաբանական և գրական ստեղծագործություններ պարունակող մատյաններ և ընծայվում էին ոչ միայն տեղի վանքերին ու եկեղեցիներին, այլև հայոց նշանավոր այլ հոգևոր կենտրոնների:

Իրանահայ գրչության կենտրոնների և մատյանների ընդօրինակման հովանավորներ էին նաև կանայք, որոնցից արժանի է հիշատակել 1336 թ. Թավրիզում գրիչ Թումայի ընդօրինակած Ավետարանի պատվիրատու Նազխաթունին:

Պատմական հայրենիքից հեռու ապրելով՝ հայ գրիչներն ու ծաղկողները կապերը չէին խզել ոչ միայն մայր հայրենիքի, այլև նույնիսկ Կիլիկիայի հայկական թագավորության հետ: Ձեռագրերի հիշատակարաններում բազմիցս հիշատակվում են Օրբելյան իշխանատոհմի ներկայացուցիչների, հայոց կաթողիկոսների, կիլիկյան թագավորների անունները:

Իրանահայ գրչության կենտրոնները սերտ կապեր էին պահպանել նաև հայկական նշանավոր գիտակրթական օջախների (Գլաձորի համալսարան, Մեծոփա վանքի դպրանոց և այլն) և դրանց րաբունապետների հետ (Եսայի Նշեցի, Ներսես Մշեցի, Սբ Գրիգոր Տաթևացի և այլք):

Լենկ Թեմուրի և թուրքմեն ցեղերի արշավանքներից հետո իրանահայ գաղթօջախները ծանր տնտեսական կորուստներ կրեցին. դրանք իրենց անդառնալի հետքը թողեցին իրանահայ թեմերի հոգևոր-մշակութային կյանքի վրա: Նշանավոր մեկենասների հեռանալուց հետո խամրեցին գրչության կենտրոնները:

[29] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 71:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Ա, Եր., 1964:
2. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը: Նրանց անցեալը, ներկան և ապագան, մասն Ա, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1911:
3. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2005:
4. Գորոյեանց Ն. Յ., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968:
5. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1301-1400 թթ.), կազմեց՝ Լ.Ս.Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1950:
6. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս I, (1401-1450 թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1955:
7. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, (1451-1480 թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., եր., 1958:
8. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց՝ Լ.Ս. Խաչիկյան, ԳԱ հրատ., Եր., 1967:
9. Խաչերյան Լ., Գլաձորի համալսարանը, Եր., 1973:
10. Հակոբյան Հ., Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. ուղեգրություններ, հ.Ա., ԺԳ-ԺՋ դար (1253-1582 թթ.), Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Եր., 1932:
11. Մաղաքիա արք.Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:
12. Մարտիրոսյան Հ., Իրանահայ գաղութի պատմություն, «Զանգակ-97» հրատ., Եր., 2007:

АРМАН АНДРИКЯН

Аспирант факультета богословия ЕГУ

Центры письменности армянских епархий Ирана в XIV-XV вв.– В статье сделана попытка на основе данных исторических первоисточников и литературы изучить деятельность культурно-духовных очагов Армянской Апостольской церкви на территории Ирана в XIV-XV вв. Особое внимание уделено данным Памятных записей армянских рукописей, созданных в таких центрах письменности, как монастырь Св.Фаддея, Ордубазар или Султание, Тебриз и Маку. Этот период был одним из самых тяжелых в истории армянского народа, когда сменившие друг друга кочевники: монголы, узбеки, аккоюнлу и каракоюнлу грабили не только саму Армению, но и армянские колонии в разный странах Передней Азии. Среди последних наибольшие потери понесели армянскии колонии на территории Ирана. Несмотря на тяжелейшие экономические и политико-правовые условия, в армянских епархиях Ирана духовно-культурная жизнь не остановилась, продолжали функционировать старые и новые центры

письменности, деятельности которых посвящена данная статья.

Ключевые слова: *армянские епархии Ирана, центры письменности, монастырь Св.Фаддея, Тебриз, Султание.*

DOI: 10.52174/1829-0280_2021_1_162
JEL: Z00, Z12

ARMAN ANDRIKYAN
PhD Student of the Department of Theology at YSU

Writing Centers of Iranian-Armenian Spiritual Dioceses in XIV-XV Centuries.– The paper attempts to study the activities of monasteries, church schools, and writing centers of the Armenian Apostolic Church under the Iranian-Armenian dioceses in the XIV-XV centuries on the basis of scientific researches published in the historical sources. This period was one of the most difficult centuries in Armenian history, when nomadic tribes - Mongols, Uzbeks, Karakoyunlus and Akkoyunlus, took turns robbing and destroying Armenia, the Armenian-populated colonies. Among the latter, the biggest losses were suffered by the Iranian-Armenian colonies and their dioceses. Despite the difficult economic, legal and political situation, the spiritual and cultural life in the Armenian dioceses of Iran did not stop. The themes of the manuscripts created in the centers of writing are quite comprehensive: the Bible, the Gospel, the Epistles of the Apostles, the Interpretations, the Doctrinal Papers, the Collections, the Reason, Haysmavurk, the Holy Scriptures, to name a few.

Key words. *Iranian-Armenian dioceses, writing centers, St. Thaddeus Monastery, Tabriz, Sultaniye.*

DOI: 10.52174/1829-0280_2021_1_162
JEL: Z00, Z12